



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ՉՈՐԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ԱՂՕԹՔ ԹԵՄԻՍ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կիրակի, 11 Սեպտեմբերը Վերացման Ս. Խաչի տօնն է, մեր եկեղեցւոյ տաղաւար տօներէն մէկը: Նոյն օրը կը զուգադիպի նաեւ Նիւ Եորքի, Ուաշինկթընի եւ Փենսիլվանիոյ մէջ 11 Սեպտեմբեր 2001-ին տեղի ունեցած ահաբեկչական արարքներուն 10րդ տարելիցին, որոնք պատճառեցին բազմաթիւ անմեղ զոհեր:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, «Տեր Ողորմեա»-յի յատուկ աղօթք պիտի բարձրացուի անմեղ զոհերուն յիշատակին:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ Ս. եւ անմահ Պատարագին, հաղորդակից ըլլայ Ս. Խաչի տօնի խորհուրդին ու աղօթակից ըլլայ զոհերուն յիշատակին:

PRAYERS ON THE 10TH ANNIVERSARY OF THE 9/11 ATTACKS

Sunday, September 11, 2011, is the Feast of the Exaltation of the Holy Cross. Also on that day, we will join our fellow countrymen in somberly commemorating the 10th anniversary of the 9/11 terrorist attacks on the World Trade Centers, the Pentagon, and in Pennsylvania.

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, *Der Voghormya* (Lord, have mercy) prayers will offered during Divine Liturgy in all Prelacy Churches.

We invite our faithful parishioners to attend Divine Liturgy on Sunday to observe the Feast of the Exaltation of the Holy Cross pray for the souls of the nearly 3,000 victims who tragically lost their lives on that fateful day in New York, Washington D.C., and Pennsylvania.